



California's protection & advocacy system

Վերջին փոփոխությունները Ներտնային օժանդակման ծառայությունների (IHSS) մատակարարների համար աշխատանքային օրերի բացառումների և Բացառիկ անձնական խնամքի ծառայությունների (WPCS) վերաբերյալ

2019 թվականի մարտ, Հրատ. #5603.10 - Armenian

Այս հրատարակությունը նախատեսված է Ներտնային օժանդակման ծառայություններ (IHSS) և Բացառիկ անձնական խնամքի ծառայություններ (WPCS) ստացող անձանց և նրանց խնամք տրամադրող անձանց համար:¹ Այս հրատարակությունը տեղեկատվություն կտրամադրի այն բանի վերաբերյալ, թե ինչպես պահանջել բացառություն ժամերի առավելագույն քանակից, որոնք որոշ մատակարարներ կարող են ամսական տրամադրել IHSS և WPCS ծրագրերում: Բացառությունը հաշվի առնելով՝ մատակարարները կարող են աշխատել ամսական մինչև 360 ժամ:

¹ WPCS-ը ծառայություն է, որը տրամադրվում է Տնային և համայնքահեն այլընտրանքներից բացառության միջոցով (նախկինում հայտնի է որպես Հաշմանդամների ու տարեցների խնամքի ինտենսիվ բուժօգնության հիվանդանոցից կամ NF/AH-ից բացառություն): WPCS-ը չիցենզավորված ուղեկցողի կողմից տրամադրվող ծառայություն է, որն օգնում է Բացառության մասնակիցներին իրենց անձնական խնամքի և տանը մնալու համար այլ կարիքների հարցերում: [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ աշխատաժամանակի վերաբերյալ դաշնային կանոններ և Աշխատանքային շաբաթվա նահանգային սահմանափակումներ

Ի պատասխան աշխատանքի դեպարտամենտի դաշնային կարգավորումներում փոփոխությանը, Կալիֆորնիայի նահանգը համաձայնվել է վճարել IHSS և WPCS ծրագրերի ներտնային աշխատողների լրացուցիչ աշխատաժամանակի դիմաց: Ներկայումս նահանգը վճարում է շաբաթական 40 ժամից ավել ցանկացած լրացուցիչ աշխատաժամանակի դիմաց: Ընդհանրապես լրացուցիչ աշխատաժամանակի վերաբերյալ հավելյալ տեղեկությունների համար տե՛ս թիվ 5586.01 հրատարակությունը՝ *IHSS նոր կանոնները*՝ [Lրացուցիչ աշխատաժամանակի դիմաց և կապակցված այլ վճարներ](https://www.disabilityrightsca.org/publications/new-rules-for-ihss-overtime-and-related-changes) <https://www.disabilityrightsca.org/publications/new-rules-for-ihss-overtime-and-related-changes> կայքում:

Միաժամանակ, նահանգը սահմանափակումներ է կիրառել շաբաթական առավելագույն ժամերի նկատմամբ, որոնք IHSS կամ WPCS մատակարարը կարող է աշխատել մեկ աշխատանքային շաբաթում: Ընդհանուր առմամբ՝

- Միայն մեկ շահառուի համար աշխատող մատակարարը չի կարող շաբաթական աշխատել 70 ժամ 45 րոպեից ավել IHSS և(կամ) WPCS-ի համար միասին վերցված:
- Մեկից ավելի շահառուի համար աշխատող մատակարարը չի կարող շաբաթական աշխատել 66 ժամից ավել IHSS և(կամ) WPCS-ի համար միասին վերցված:²

² Սոցիալական ապահովության ապահովության մասին Օրենսգիրք §§ 12300.4, 12301.1: [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

Կալիֆորնիայի վարչական բացառությունները (2016 թվական)

Սկսած 2016 թվականի փետրվարի 1-ից Կալիֆորնիայի Սոցիալական ապահովության վարչությունը հաստատել է բացառումների երկու կատեգորիա, որոնք թույլ են տվել որոշ IHSS մատակարարների աշխատել վերոհիշյալ սահմաններից դուրս՝ «Ընտանիք» բացառումը և «Բացառիկ հանգամանքներ» բացառումը: Ի տարբերություն աշխատանքային շաբաթի սահմանափակումների, այս բացառումները սահմանված չեն որևէ դրույթով կամ կարգավորմամբ, սակայն հայտարարվել էին Համավարչաշրջանային գրություններում, որոնք ուղարկվել են վարչաշրջանի սոցիալական ապահովության հարցերով տնօրեններին և IHSS ծրագրի ղեկավարներին:³ Մատակարարները, որոնք ստանում են բացառում, դեռևս սահմանափակված էին/սահմանափակված են մեկ շաբաթում 90 ժամով, չպետք է ամսական գերազանցեն 360 ժամը:⁴ Կալիֆորնիայի Առողջապահության դեպարտամենտը նաև հրապարակել է նմանատիպ ուղեցույց առավելագույն օրական, շաբաթական և ամսական ժամերի մասին, որոնք մատակարարը կարող է աշխատել շահառուի համար, որը միայն ստանում է WPCS կամ WPCS և IHSS համակցված:⁵

IHSS և WPCS Մատակարարների աշխատանքային շաբաթվա վերաբերյալ բացառումները օրենքի ուժ ստացան 2017 թվականին

Սկսած 2017 թվականի հուլիսի 1-ից գոյություն ունեն IHSS երկու բացառումներ, որոնք սահմանվում են Կալիֆորնիա նահանգի օրենսդրությամբ:⁶ Բացառում ստանալու համար հաստատված

³ Համավարչաշրջանային գրություն թիվ 16-07, (“ACL 16-07”), որն առկա է <http://www.cdss.ca.gov/lettersnotices/entres/getinfo/acl/2016/16-07.pdf> հասցեում: [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

⁴ Համավարչաշրջանային գրություն թիվ 16-22, (“ACL 16-22”), որն առկա է <http://www.cdss.ca.gov/lettersnotices/EntRes/getinfo/acl/2016/16-22.pdf> հասցեում: [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

⁵ DHCS-ի գրություն թիվ 16-001, որն առկա է <http://www.dhcs.ca.gov/services/ltc/Documents/WPCSOvertimeBulletin.pdf> հասցեում: [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

⁶ Սոցիալական ապահովության ապահովության մասին Code § 12300.4(դ)(3)(Ա)-(Բ): [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

մատակարարները կարող են գերազանցել աշխատանքային շաբաթվա 66-ժամյա սահմանափակումը մինչև ամսական առավելագույնը 360 ժամ՝ նրանց կողմից սպասարկվող բոլոր IHSS շահառուների համար:

Գոյություն ունի WPCS մատակարարների համար հասանելի երկու բացառում, որոնք թույլ են տալիս հաստատված մատակարարներին աշխատել օրական մինչև ընդամենը 12 ժամ՝ ամսական ընդամենը մինչև 360 ժամ՝ տրամադրվող IHSS և WPCS համար:⁷

IHSS ԲԱՑԱՌՈՒՄՆԵՐ

1. Ընդհանուր տեղեկատվություն

1.1. Ինչպե՞ս իմանալ, թե արդյոք պայմանունակ եմ IHSS բացառման համար:

Գնահատման կամ վերագնահատման ժամանակ վարչաշրջանը կգնահատի ձեզ՝ որոշելու համար արդյոք ձեր մատակարարը կարող է պայմանունակ լինել 1-ին կամ 2-րդ Բացառմանը (ներկայացված է ստորև): Վարչաշրջանը կտեղեկացնի հնարավոր պայմանունակ շահառուներին բացառման(բացառումների) մասին և այն ընթացակարգի մասին, որով դուք կամ ձեր մատակարարը կարող եք դիմել:⁸

1.2. Եթե իմ մատակարարը բացառում է ստանում, նա կարող է աշխատել թույլատրված բոլոր ժամերին այն շահառուների համար, ում նա IHSS է տրամադրում:

Ոչ: Նույնիսկ բացառությունը հաշվի առնելով մատակարարները չեն կարող աշխատել ամսական 360 ժամից ավելի: Քանի որ նահանգը մատակարարին ամսական 360 ժամից ավելի չի վճարի, DRC -ն չի կարող ձեզ օգնել բացառում ստանալ առավելագույն սահմանաչափից ավել: Եթե մատակարարի շահառուների համար ժամերի ընդհանուր

⁷ Սոցիալական ապահովության ապահովության մասին Օրենսգիրք § 14132.99(դ)(1)(Բ)-(2): [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

⁸ Սոցիալական ապահովության ապահովության մասին Օրենսգիրք § 12300.4(դ)(3)(Գ): [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

քանակը 360 ժամից ավել է, դուք ստիպված կլինեք վարձել մեկ այլ IHSS մատակարար՝ մնացած ժամերին աշխատելու համար:

2. IHSS բացառում 1 (Նախկինում՝ Ընտանեկան բացառում)

2.1. Ո՞վ է պայմանունակ թիվ 1 բացառմանը:

Թիվ 1 բացառումը հասանելի է մատակարարների, որոնք բավարարում են հետևյալ ԲՈԼՈՐ պայմանները 2016 թվականի հունվարի 31-ի դրությամբ կամ նախքան տվյալ ամսաթիվը՝

1. Տրամադրում են ծառայություններ երկու կամ ավելի IHSS շահառուների և
2. Ապրում են նույն տանը, ինչ բոլոր շահառուները, որոնց նրանք ծառայություններ են մատուցում, և
3. Կենսաբանական ազգակցական կապ ունի բոլոր այն շահառուների հետ, որոնց նա ծառայություններ է տրամադրում, , հանդիսանում է նրանց պատրոնաժային խնամք տրամադրող, օրինական խնամակալ կամ հոգաբարձու՝ որպես ծնող, պատրոնաժային ծնող կամ հոգեծնող, պապ կամ տատ, օրինական խնամակալ կամ հոգաբարձու:⁹

2.2. Ինչպե՞ս կարող եմ դիմել թիվ 1 բացառման համար:

Թիվ 1 Բացառումը (որը նախկինում հայտնի էր որպես Ընտանեկան բացառում) սահմանվելուց առաջ CDSS-ն նամակ և ձև էր ուղարկում մատակարարներին, որոնք որոշվել են որպես չափանիշներին բավարարող: Եթե ձեր մատակարարը բավարարում էր չափանիշներին, սակայն նրան գրություն չէր ուղարկվել, ապա CDSS-ը վարչաշրջաններին և շահառուներին խորհուրդ է տալիս լրացնել Թիվ 1 բացառման դիմումը և այն փոստով ուղարկել անմիջապես CDSS-ին: Երեք էջանոց դիմումը կցված է Համավարչաշրջանային թիվ 16-07 գրությանը և առկա է ներբեռնման համար <http://www.cdss.ca.gov/lettersnotices/entres/getinfo/acl/2016/16-07.pdf>

⁹ Սոցիալական ապահովության ապահովության մասին Օրենսգիրք § 12300.4(դ)(3)(Ա): [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

հասցեում: Դուք կարող եք լրացված դիմումն ուղարկել հետևյալ հասցեով՝

CDSS – Adult Programs Division
744 P Street, Mail Stop 9-7-96
Sacramento, CA 95814

Եթե ցանկանում եք դիմել, սակայն համացանցի հասանելիություն չունեք, ապա կարող եք զանգահարել CDSS (916) 651-5350 հեռախոսահամարով և խնդրել նրանց ձեզ ուղարկել դիմումի ձևի թղթային տարբերակը: Հիշեք, որ կարճ հաղորդագրություն թողնեք ձեր անվանմբ և հեռախոսահամարով, այնպես որ ձեզ հետ զանգահարեն: Դուք նաև կարող եք դիմումը խնդրել վարչաշրջանի սոցիալական աշխատողից:

3. IHSS բացառում 2 (Նախկինում՝ Բացառիկ հանգամանքների բացառում)

3.1. Ո՞վ է պայմանունակ թիվ 2 բացառմանը:

Մատակարարներ, որոնք աշխատում են երկու կամ ավելի IHSS շահառուների համար, պայմանունակ են թիվ 2 բացառման համար, եթե յուրաքանչյուր շահառու ունի առնվազն ՄԵԿ հետևյալ հանգամանք, որը շահառուին ենթարկում է տնից դուրս խնամքի հաստատությունում տեղավորման լուրջ ռիսկի, եթե այդ մատակարարը չկարողանա տրամադրել ծառայությունները՝

Չափանիշ Ա՝ Ունի բարդ բժշկական և/կամ վարքագծային կարիքներ, որոնք պետք է բավարարի մատակարարը, որն ապրում է շահառուի հետ նույն տանը, ԿԱՄ

Չափանիշ Բ՝ Ապրում է գյուղական կամ հեռավոր տարածքում, որտեղ հասանելի մատակարարների թիվը սահմանափակ է և արդյունքում շահառուն չի կարող վարձել մեկ այլ մատակարար, ԿԱՄ

Չափանիշ Գ՝ Չի կարող վարձել մեկ այլ մատակարար, որը խոսում է նույն լեզվով, ինչ շահառուն, և արդյունքում շահառուն չի կարող ուղղորդել իր սեփական խնամքը:¹⁰

3.2. *Ինչպե՞ս կարող եմ դիմել թիվ 2 բացառման համար:*

Թիվ 1 Բացառումը ¹¹ սահմանվելուց առաջ նահանգի ուղեցույցով պահանջվում էր, որ վարչաշրջանը և շահառուն սպառեն մեկ այլ մատակարար գտնելու բոլոր հնարավոր տարբերակները, որպեսզի նա աշխատի շահառուի թույլատրված շաբաթական և ամսական ժամերը: Օրենսդրությունը չի ներառում այս պահանջը և ձեզ այլևս հարկավոր չէ սպառել մատակարարներին վերաբերող բոլոր տարբերակները, այնուամենայնից, որոշ վարչաշրջաններ սխալմամբ շարունակում են դա պահանջել: Համաձայն ավելի նոր համավարչաշրջանային գրության, որը հրապարակել է նահանգը՝ «Բացի բացառման մեկ չափանիշին բավարարելուց [Ա-Գ վերոհիշյալ], շահառուները, անհրաժեշտության դեպքում վարչաշրջանի օգնությամբ, պետք է ուսումնասիրեն լրացուցիչ մատարակարար(մատակարարներ) վարձելու առկա տարբերակները: ***Այլ մատակարար գտնելու/նրանցից օգտվելու նախորդ գրանցված փորձերը կարող են համարվել այս պահանջի բավարարում:***» (ավելացվել է շեշտ):¹²

3.3. *Ինչպե՞ս կարող եմ դիմել թիվ 2 բացառման համար:*

Յուրաքանչյուր վարչաշրջանի գնահատման կամ վերագնահատման ժամանակ վարչաշրջանի սոցիալական աշխատողը պետք է գնահատի արդյոք շահառուի հանգամանքները մատնանշում են, որ այդ շահառուի մատակարարը կարող է պայմանունակ լինել բացառմանը: Ապա վարչաշրջանը պետք է այդ շահառուներին տեղեկացնի հնարավոր կիրառելի բացառումների և այն գործընթացի մասին, որով նրանց

¹⁰ Սոցիալական ապահովության մասին Օրենսգիրք § 12300.4(դ)(3)(Բ). Համավարչաշրջանային գրություն թիվ 18-31 (“ACL 18-31”)՝ 2-ում, որն առկա է <http://www.cdss.ca.gov/Portals/9/ACL/2018/18-31.pdf?ver=2018-03-23-130932-073> հասցեում: [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

¹¹ ACL 16-22՝ 3: [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

¹² ACL 18-31՝ 2: [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

մատակարարը կարող է դիմել բացառման համար:¹³ Մատակարարը պետք է պահանջի, լրացնի և վարչաշրջանին ներկայացնի բացառման դիմումի ձևը (SOC 2305).

3.4. Ի՞նչ է տեղի ունենում դիմումը ներկայացնելուց հետո:

Վարչաշրջանը կուսումնասիրի թիվ 2 բացառման դիմումները և կուսումնասիրի արդյոք այն մերժելու արդյունքում դուք կենթարկվեք տնից դուրս խնամքի հաստատությունում տեղավորման լուրջ ռիսկի՝ 1-ն, 2-րդ կամ 3-րդ վերոնշյալ կետերում նշված հանգամանքների պատճառով: Թիվ 2 բացառման դիմումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում վարչաշրջանի IHSS ծրագիրը կուղարկի գրավոր ծանուցագիր մատակարարին և շահառուներին, ում նրանք ծառայություններ են տրամադրում՝ դիմումը հաստատելու կամ մերժելու վերաբերյալ:¹⁴

3.5. Ի՞նչ պետք է հաշվի առնի Վարչաշրջանը Ա Չափանիշին համապատասխան իմ դիմումը ուսումնասիրելիս:

Ա չափանիշի դեպքում թիվ Թ Բացառման նպատակով բարդ բժշկական և/կամ վարքագծային վիճակը նշանակում է, որ IHSS շահառուն ունի անձնական խնամքի ծառայություններ, որոնք պահանջում են «հատուկ ուշադրություն և խնամք, և այս ծառայությունները չեն կարող տրամադրվել որևէ այլ անձի կողմից, բացի նույն տանը ապրող IHSS մատակարարի՝ առանց շահառուի ֆիզիկական դիմացկունության և/կամ վարքագծի վրա ազդեցություն թողնելու, քանի որ այն կապ ունի հոգեկան առողջության վիճակի հետ (*օրինակ՝* աուտիստիկ սպեկտրի խանգարում, դեմենցիա, Ալցզեյմերի հիվանդություն և այլն): Եթե ծառայությունների մատակարարումը ոչ թե գոյություն ունեցող մատակարարի, այլ որևէ այլ անձի կողմից IHSS շահառուին վնաս կհասցնե՝ տնից դուրս խնամքի հաստատությունում տեղավորմանը հանգեցնող ֆիզիկական և/կամ զգացական սթրեսի պատճառով»:¹⁵

¹³ ACL 18-31՝ 2: [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

¹⁴ Սոցիալական ապահովության մասին Օրենսգիրք § 12300.4(դ)(3)(E)(ii): ACL 18-31՝ 3: [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

¹⁵ ACL 18-31՝ 3-4: [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

Վարչաշրջաններին հրահանգավորում են ուսումնասիրել, արդյոք շահառուները ստանում են պարաֆժլկական ծառայություններ կամ մասնագիտացված խնամք պահանջող ծառայություններ (օրինակ՝ պետքանոթի փոխարինում կամ անկողմի մեջ շրջելը), արդյոք նրանք ունեն ախտանիշեր, որոնք կարող են ցույց տալ վարքագծային կարիք և արդյոք նրանք խնամք են ստանում այլ անձանցից, ինչպես օրինակ ցերեկային խնամքի ծրագրից կամ IHSS այլ մատակարարներից:¹⁶

3.6. Ի՞նչ պետք է հաշվի առնի Վարչաշրջանը B Չափանիշին համապատասխան իմ դիմումը ուսումնասիրելիս:

Բ Չափանիշի համար գյուղական կամ հեռահար տարածք է համարվում «քաղաքային տարածքների և քաղաքային կլաստերներից դուրս գտնվողը»: Վարչաշրջանը կգնահատի շահառուի հասանելիությունը իրենց տարածքում մատակարարներին և նաև կուսումնասիրի առկա մատակարարների թիվը (ներառյալ մատակարարների ռեգիստրը, ընտանիքի անդամներին, հարևաններին և այլն) ովքեր ցանկանում են մեծ տարածություններ անցնել՝ ծառայություններ տրամադրելու համար: Վարչաշրջանը պետք է գրանցի հայտնաբերված խոչընդոտները, որոնք սահմանափակում են շահառուի՝ լրացուցիչ մատակարարներ վարձելու կարողությունը:¹⁷ Պարտադիր չէ, որ մատակարարները շահառուների հետ նույն տանը բնակվեն:

3.7. Ի՞նչ պետք է հաշվի առնի Վարչաշրջանը G Չափանիշին համապատասխան իմ դիմումը ուսումնասիրելիս:

Ինչ վերաբերում է G չափանիշին, վարչաշրջանը պետք է որոշի այն չափը, որով շահառուի՝ իր լեզվով խոսող մատակարար վարձելու անկարողությունը խոչընդոտ է հանդիսանում շահառուին թույլատրված ծառայություններ մատուցելու գործում: Վարչաշրջանը պետք է գնահատի, արդյոք որոշակի առաջադրանքները, *օրինակ՝* տնային և դրանց հետ կապված ծառայությունների առաջադրանքները կարող են արդյունավետորեն կատարվել մի մատակարարի կողմից, ով չի խոսում շահառուի նույն լեզվով առանց որոշակի նախնական թարգմանական

¹⁶ ACL 18-31՝ 4-5: [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

¹⁷ ACL 18-31՝ 5: [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

օժանդակության: Բացառիկ հանգամանքը գոյություն ունի միայն երբ շահառուի՝ նույն լեզվով խոսող մատակարար վարձելու անկարողությունը հանգեցնում է շահառուի կողմից սեփական խնամքը ուղղորդելու անհաղթահարելի խոչընդոտի:¹⁸

3.8. Բացառում ստանալու համար ես սկզբից պետք է փնտրե՞մ այլ մատակարարների:

Նախքան թիվ 2 բացառումը շնորհելը վարչաշրջանը կուսումնասիրի առկա մատակարարների: Համապատասխան խնդրանքի դեպքում վարչաշրջանը պարտավոր է օգնել լրացուցիչ մատակարարներ փնտրելու հարցում: **Կարևոր է հաշվի առնել, որ համաձայն նահանգի «ուսումնասիրությունը կարող է ներառել լրացուցիչ մատակարարներ գտնելու/օգտագործելու ներկա և նախորդ փորձերը:»** Վարչաշրջանը կարող է հաշվի առնել և պետք է արձանագրի այլ մատակարարների կողմից սպասարկվելու արդյունքում շահառուին (շահառուներին) պատճառված որևէ վնասակար ազդեցությունը, նույնիսկ եթե դա տեղի է ունեցել նախքան բացառման դիմումը ներկայացնելը: Նման նախապատմությունը պետք է բավարարի լրացուցիչ մատակարարներ որոնելու պահանջը:¹⁹

3.9. Որքա՞ն է տևում իմ թիվ 2 բացառման հաստատումը:

Թիվ 2 բացառման հաստատումները տևում են մեկ տարի և կարող են երկարաձգվել, եթե հանգամանքների փոփոխություն տեղի չի ունեցել:²⁰ Եթե հանգամանքները փոփոխվել են, սակայն բացառումը դեռևս անհրաժեշտ է այլ պատճառով, վարչաշրջանը այն պետք է դիտարկի որպես նոր դիմում:

3.10. Ի՞նչ պետք է անեն, եթե իմ դիմումը մերժվի:

Եթե վարչաշրջանը մերժում է բացառումը, վարչաշրջանը պետք է նաև բացատրի ծանուցագրում մերժման պատճառը և CDSS կողմից վերանայման համար դիմելու ընթացակարգը՝ անկախ վարչաշրջանի

¹⁸ ACL 18-31՝ 5: [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

¹⁹ ACL 18-31՝ 6: [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

²⁰ ACL 18-31՝ 9: [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

որոշումից: Այս ընթացակարգը կոչվում է ESAR (թիվ 2 բացառման Նահանգի վարչակազմի վերանայում): Մատակարարները կամ շահառուները կարող են CDSS կողմից վերանայում պահանջել:²¹ Այս ընթացակարգի ժամանակ հավելյալ աշխատամանակի հետ կապված խախտումները կվերացվեն՝ անկախ նահանգի որոշումից:²²

ESAR վերանայում պահանջելու համար Անպայմանունակության վերաբերյալ վարչաշրջանի ծանուցագիրը ստանալուց հետո 45 օրվա ընթացքում դուք պետք է SOC 2313 ձևը փոստով ուղարկեք հետևյալ հասցեով՝

California Department of Social Services
Appeals, Administrative Review and Reimbursement Bureau
Attention: Exemption 2 State Administrative Review Unit
744 P Street, MS 9-12-04
Sacramento, CA 95814

ESAR-ը ձեզ ծանուցում կուղարկի՝ հեռախոսային համաժողով կազմակերպելով ESAR դիմումը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում: Հեռախոսային համաժողովի ընթացքում դուք կարող եք լրացուցիչ տեղեկություններ տրամադրել, որոնք կարող են ներառել «փաստաթղթեր այլ մատակարարի կողմից շահառուի վրա վնասակար ազդեցության դեպքերի մասին: Օրինակները ներառում են, սակայն չեն սահմանափակվում՝ առողջապահական խնամք տրամադրողների, ընտանիքի անդամների, ընկերների կամ այլ անձանց կողմից նամակներ՝ հիմնված նրանց դիտարկումների վրա, թե ինչպես շահառուի առողջությունը և/կամ ապահովությունը բացասական ազդեցություն կրել նոր մատակարարից օգտվելու դեպքում:»²³ Դուք նաև կարող եք խնդրել լրացուցիչ տեղեկություններ տրամադրել, երբ պետք է ֆաքսով կամ փոստով ուղարկվի հեռախոսային համաժողովից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

²¹ Սոցիալական ապահովության մասին Օրենսգրքի § 12300.4(դ)(3)(E)(iii)(I): Համավարչաշրջանային գրություն 18-58 («ACL 18-58»): [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

²² ACL 18-58՝ 4: [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

²³ ACL 18-58՝ 4: [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

3.11. *Ի՞նչ է տեղի ունենում իր գործի վերանայումից հետո:*

CDSS-ը կուղարկի իր գրավոր որոշումը 20 օրվա ընթացքում այն օրվանից հետո, երբ նշանակված է ձեր ու անձնակազմի հանդիպումը վերանայման վերաբերյալ, բացառությամբ եթե ձեզ լրացուցիչ ժամանակ տրամադրեն տեղեկությունները ներկայացնելու համար: Գրավոր որոշմամբ մատակարարը և նրա շահառուները կտեղեկացվեն բացառման շնորհման կամ մերժման մասին: Եթե CDSS-ը մերժում է բացառումը, այն նաև պետք է գրավոր որոշմամբ բացատրի մերժման պատճառը:²⁴ Եթե բացառումը մերժվում է մատակարարը չի կարող շաբաթական 68 ժամից (կամ ամսական 264 ժամից) ավելի աշխատի և շահառուն (շահառուները) պետք է գտնեն մեկ այլ մատակարար՝ մնացած ժամերը ապահովելու համար:

4. IHSS Աշխատանքային շաբաթվա բացառումներ Ծնող-մատակարարների վերաբերյալ կարգավորումներ

DRC-ն ստացել է մի շարք հարցեր IHSS աշխատանքային շաբաթվա սահմանաչափերի մասին, երբ ծնողները հանդիսանում են իրենց երեխաների մատակարարները և բացառումները չեն ներառում շահառուի բոլոր թույլատրված ժամերը: Այս իրավիճակների կանոնները բացատրում են ստորև օրինակների միջոցով:²⁵

Օրինակ 1՝ Ես մայր եմ և ծնող-մատակարար իմ երեք անչափահաս երեխաների համար, որոնք ստանում են համակցված ընդհանուր 460 ժամ IHSS ամսական: IHSS աշխատանքային շաբաթվա բացառման համար իմ դիմումը նոր է հաստատվել, սակայն ինձ հարկավոր է լրացուցիչ մատակարար, որը կաշխատի լրացուցիչ 100 ժամ:

²⁴ ACL 18-58՝ 5: [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

²⁵ Տե՛ս ACL 18-31-ը՝ 6-7-ում այս կանոնների բացատրության համար: [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

4.1. Արդյո՞ք կկորցնեմ իմ պայմանունակությունը որպես անչափահաս երեխաների ծնող-մատակարար, եթե գտնեմ մատակարար, ով ամսական կաշխատի 360 ժամից ավելի:

Ոչ: IHSS բացառումները թույլ են տալիս բացառում ստացած ծնողին վարձել լրացուցիչ մատակարար՝ երեխաների կարիքներն ապահովելու համար, եթե նրանք ունեն ամսական հաստատված 360-ից ավելի ժամ կամ 264 ժամ ամսական՝ առանց Բացառման, առանց վտանգելու ծնող-մատակարարի՝ բացառման պայմանունակությունը: Լրացուցիչ ժամերը կարող են տրամադրվել ընտանիքի անդամ չհանդիսացող անձի:

4.2. Իմ երեխաների հայրը կկարողանա՞ աշխատել լրացուցիչ ժամերը ամսական 360 ժամից ավելի:

Որոշ դեպքերում, այո: IHSS ծնող-մատակարարների վերաբերյալ կարգավորումը թույլ է տալիս, որպեսզի երկու ծնող լինեն վճարովի մատակարարներ իրենց երկու և ավելի անչափահաս երեխաների համար, սակայն երկու ծնողն էլ ՊԵՏՔ Է համապատասխանեն ծնող մատակարարներին ներկայացվող՝ MPP § 30-763.451-ում նշված պահանջներին: Այս կարգավորումը պահանջում է, որպեսզի ծնողը թողնի լրիվ դրույքով վարձատրություն կամ նրան չթողնեն լրիվ դրույքով աշխատել (ինչը սահմանվում է որպես շաբաթական 40 ժամ աշխատելը)՝ իր երեխայի խնամքի կարիքներից ելնելով: Առկա չէ այլ հարմար մատակարար և այդ ծնողի՝ ծառայությունները կատարելու անկարողությունը կարող է հանգեցնել անհամապատասխան վարձման կամ անհամապատասխան խնամքի: Այս դեպքում երկրորդ ծնողը (հայրը) կարող է աշխատել աշխատանքային ժամեր՝ առաջին ծնող մատակարարի 360-ժամյա առավելագույն չափից ավել, եթե նա համապատասխանում է MPP § 30-763.451-ում նշված այլ պահանջների:

Օրինակ 2՝ Ես աուտիզմ ունեցող երկու 10 տարեկան տղաների մայր եմ: Երկուսն էլ ստանում են IHSS և պաշտպանական հսկողություն: Մայքը ստանում է ամսական 212 ժամ և Ջոյին ստանում է ամսական 218 ժամ, ընդհանուր առմամբ ամսական 430 ժամ: Ինձ տրամադրվել է թիվ 1 բացառումը: Ես աշխատում եմ շաբաթական 25 ժամ որպես վարչական օգնական և ինձ չի կարելի լրիվ դրույքով աշխատել՝ իմ տղաներին IHSS տրամադրելու համար: Ամուսինս կես դրույք է աշխատում և ցանկանում

է տրամադրել մնացած IHSS ժամերը՝ ամսական 360 ժամը գերազանցող չափով: Ես անհանգստացած եմ, որ կկորցնեմ իմ ծնող-մատակարարի պայմանունակությունը, եթե ամուսինս դիմի լրացուցիչ մատակարար լինելու համար:

Երբ մեկ ծնող-մատակարարը հասել է առավելագույն սահմանաչափի (264 ժամ ամսական կամ բացառումով 360 ժամ ամսական), մյուս ծնողը կարող է տրամադրել մնացած ժամերը, եթե նա համապատասխանում է MPP § 30-763.451-ի պահանջներին: Հետևաբար, հենց մայրիկը հասնի ամսական 360 ժամի, նա համարվում է «անհասանելի»: Այդ դեպքում հայրիկը կարող է տրամադրել մնացած 70 ժամը, քանի որ նա համապատասխանում է MPP § 30-763.451-ում նշված ծնող-մատակարարի պայմաններին (*այսինքն*, նա աշխատում է շաբաթական 40 ժամից պակաս՝ երեխաներին IHSS տրամադրելու համար, չկա հարմար ոչ մի մատակարար և հայրիկի՝ IHSS տրամադրելու անկարողությունը կարող է հանգեցնել անհամապատասխան վարձմանը կամ անհամապատասխան խնամքի):

Հաշվի առեք, որ մայրիկի անհասանելի չլինելը հիմնված է բացառապես այն փաստի վրա, որ նա հասել է թույլատրելի առավելագույն ժամերի: Նրա անհասանելիությունը այն պատճառով ՉԷ, որ մեկ ծնողը աշխատում է մեկ երեխայի համար և անհասանելի է մյուս երեխայի հետ աշխատելու համար:

ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՄԱՑՈՂ ԱՆՁՆԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (WPCS) ԲԱՑԱՌՈՒՄՆԵՐ

Ներտնային և համայնքահեն այլընտրանքների (HCBA) մատակարարները (նախկինում հայտնի է որպես Հաշմանդամների ու տարեցների խնամքի ինտենսիվ բուժօգնության հիվանդանոցից կամ NF/AH-ց բացառություն) կամ Ներտնային խնամքի բացառության մասնակիցները կամ հայտատուները, որոնք ներգրավված են բացառություններից մեկում 2016 թվականի հունվարի 31-ի դրությամբ կամ դրանից առաջ և ում բժշկական կամ վարքագծային կարիքների պատճառով ծառայությունները պետք է տրամադրվեն պահանջվող մատակարարի կողմից, պայմանունակ են WPCS բացառման համար, եթե գոյություն ունեն հետևյալ հանգամանքներից որևէ մեկը՝

1. Մատակարարն ապրում է նույն տանը, ինչ բացառման դիմումատուն կամ մասնակիցը, նույնիսկ եթե մատակարարը ընտանիքի անդամ չէ, ԿԱՄ
2. Մատակարարը ներկայում տրամադրում է խնամք բացառման մասնակցին և այն տրամադրել է երկու և ավելի տարի անընդմեջ, ԿԱՄ
3. Բացառման դիմումատուն կամ մասնագիցը չեն կարող այլ խնամք տրամադրող գտնել, որը խոսում է նույն լեզվով, ինչ դիմումատուն կամ մասնակիցը, և արդյունքում նրանց չեն կարողանում ուղղորդել իրենց սեփական խնամքը:²⁶

1. Ես ներգրավվել եմ HCBA (NF/AH)-ում կամ IHO բացառությանը 2016 թվականի հունվարի 31-ից հետո: Արդյո՞ք ես պայմանունակ եմ WPCS բացառման համար:

Այն մասնակցի համար, որը ներգրավվում է IHO կամ HCBA բացառմանը 2016 թվականի հունվարի 31-ից հետո, DHCS-ը մատակարարին կտրամադրի բացառում 66-ժամյա շաբաթից՝ առանձին գործերը հաշվի առնելով: հաշվի առնելով:²⁷

2. Ինձ տրամադրվել է WPCS բացառում: Արդյոք դա նշանակում է, որ կարող եմ մաշխատել այնքան ժամ, որքան ցանկանամ:

Ոչ: Հաշվի առեք, որ IHSS կամ WPCS (ակամ երկուսի) ամտակարարը, որին բացառում է տրամադրվում, կարող է աշխատել օրական մինչև ընդամենը 12 ժամ և ամսական մինչև 360 ժամ՝ նրա կողմից տրամադրվող IHSS և WPCS համար միասին, որպեսզի չգերազանցի յուրաքանչյուր բացառման մասնակցի ամսական հաստատված ժամերը:²⁸

²⁶ Սոցիալական ապահովության ապահովության մասին Օրենսգիրք § 14132.99(d)(1)(Ա)(i)-(iii): [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

²⁷ Սոցիալական ապահովության ապահովության մասին Օրենսգիրք § 14132.99(դ)(1)(Բ): [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

²⁸ Սոցիալական ապահովության ապահովության մասին Օրենսգիրք § 14132.99(դ)(1)(Բ)-(2): [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

3. Ինչպե՞ս դիմեմ WPCS բացառման համար:

Սկզբնական դիմումի պահին և առնվազն տարին մեկ անգամ DHCS-ը բացառման բոլոր դիմումատուներին կամ մասնակիցներին, ում մատակարարները կարող են պայմանունակ լինել բացառման համար, և նրանց մատակարարներին կտեղեկացնի բացառումների և դիմելու ընթացակարգի մասին:²⁹ Մեկանգամյա կարգով DHCS-ը փոստով ծանուցում և բացառման դիմումի ձև կուղարկի բոլոր այն մատակարարներին, որոնք կարող են պայմանունակ լինել բացառման համար և բացառման այն մասնակիցներին, որոնց մատակարարները ծառայություններ են մատուցում:³⁰

4. Ի՞նչ է պատահում նրանից հետո, երբ ներկայացնեմ դիմումը:

DHCS-ը կուսումնասիրի բացառման դիմումները՝ համաձայն շահագրգիռ կողմերի մասնակցությամբ մշակված ընթացակարգի: Որոշումը կայացնելիս DHCS-ը յաշվի կառնի, արդյոք բացառման դիմումատուն կամ մասնակիցը համապատասխանում է չափանիշներից մեկին, ինչպես որ բացատրվում է 7-րդ էջում:³¹

Բաառման դիմումը մատակարարից և 2016 թվականի հունվարի 31-ից հետո բացառումներից որևէ մեկում ներգրավված մատակարարի անունից՝ բացառության դիմումատուից կամ մասնակցից ստանալուց հետո 30 օրվա ընթացքում DHCS –ը գրավոր ծանուցագիր մատակարարին և բացառության դիմումատուին կամ մասնակցին՝ բացառումը հաստատելու կամ մերժելու վերաբերյալ: DHCS-ը կմշակի ստանդարտացված ծանուցագիր՝ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ:³²

²⁹ Սոցիալական ապահովության ապահովության մասին Օրենսգիրք § 14132.99(դ)(1)(Բ)(4): [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

³⁰ Սոցիալական ապահովության ապահովության մասին Օրենսգիրք § 14132.99(դ)(1)(Բ)-(3): [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

³¹ Սոցիալական ապահովության ապահովության մասին Օրենսգիրք § 14132.99(դ)(1)(Բ)(5)(Ա): [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

³² Սոցիալական ապահովության մասին Օրենսգիրք § 14132.99(դ)(1)(Բ)(5)(Բ): [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

5. Ի՞նչ պետք է անել, եթե իմ դիմումը մերժվել է:

Եթե ձեր դիմումը մերժվել է DHCS-ը պետք է նամակով բացատրի մերժման պատճառը:³³ Ներկայում անբարենպաստ որոշումը բողոքարկելու եղանակ չկա: Եթե անկախ վերանայում եք պահանջել և այդ դեպքում էլ է բացառությունը մերժվել, դուք ստիպված կլինեք վարձել մեկ այլ մատակարար՝ մնացած ժամերը և ձեր կարիքներն ապահովելու համար:

ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՆՔ ԻՄԱՆԱԼ, ՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐՆ ԱՇԽԱՏՈՒՄ ԵՆ:

Ինչ վերաբերում է IHSS բացառությունների, վարչաշրջանները պետք է գրանցեն թե քանի բացառության դիմում են ստացել և վերանայման ընթացակարգի միջոցով հաստատված կամ մերժված դիմումների թիվը: Նմանապես, CDSS-ը կ գրանցի թե քանի բացառության դիմում է ստացել և վերանայման ընթացակարգի միջոցով հաստատված կամ մերժված դիմումների թիվը: Այս թվերն ապա երեք ամիսը մեկ կհրապարակվեն CDSS-ի կայքում:³⁴ Դրանք կարելի է գտնել այստեղ՝ <http://www.cdss.ca.gov/inforesources/IHSS-New-Program-Requirements>.

Ինչ վերաբերում է WPCS բացառումների, DHCS-ն կգրանցի քանի բացառության դիմում է ստացել և վերանայման ընթացակարգի միջոցով հաստատված կամ մերժված դիմումների թիվը: Այս թվերն առնվազն երեք ամիսը մեկ կհրապարակվեն DHCS-ի կայքում:

ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՄ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼ, ԵԹԵ ԻՄ ԲԱՑԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԸ ՄԵՐՇՎԵԼ Է:

Եթե կարծում եք որ բացառության ձեր դիմումն անհիմն է երժվել, կապվեք DRC-կի հետ 1-800-776-5746 հեռախոսահամարով: Խնդրում ենք նշեք, որ քանի որ նահանգը չի վճարում մատակարարի համար ամսական 360 ժամից ավելի, մենք չենք կարող օգնել ձեզ բացառություն

³³ Սոցիալական ապահովության ապահովության մասին Օրենսգիրք § 14132.99(դ)(1)(Բ)(5)(Բ): [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

³⁴ Սոցիալական ապահովության ապահովության մասին Օրենսգիրք § 12300.4(d)(3)(E)(iv): [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

ստանալ առավելագույն սահմանաչափից ավելի Ձեզ անհրաժեշտ կլինի
գտնել լրացուցիչ մատակարարների աշխատելու համար ձեր
մատակարարի թույլատրված ժամերից ավելի: